ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի
նախարարություն
«Երևանի
հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների
հ. 17 հատուկ դպրոց»
Պետական
ոչ առևտրային կազմակերպություն

Ministry of education, science, culture and sport
Republic of Armenia
Yerevan
Special School N 17 for the children with breached-movement extremities
State non-trade Organization

ՀՀ ք.Երևան, Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական փ.-41 ☎ 646601, 646789
RA Yerevan, II Nork Massive, Moldovakan 41 ☎ 646601, 646789
17hatukdproc@gmail.com

ՀՐԱՄԱՆ ԹԻՎ 163-Լ **12.12.2023թ**

«ՀԱՅԿԱԶՈՒՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Երևանի թիվ 17 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ-ի/այսուհետ Գնորդ/ և << Հայկազունք >>ՍՊԸ-ի /այսուհետ Վաճառող/ միջև 16.12.2022թ-ին կնքված 17ՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/01 N4 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ պայմանագիր/ շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի N1 հավելածով ապրանքները:

Վերոնշյալ Պայմանագրի N2 հավելվածով <<Երևանի թիվ 17 հատուկ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարումը պետք է կատարվեր պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25. 12. 2023թ-ը:

Սակայն 23.11.2023թ-ից << Հայկազունք >>ՍՊԸ -ն խախտելով պայմանագրով սահմանված ժամկետները չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները :

Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ << Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>>:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝<< Պայմանագիր կնքած անձի կողմից սնտանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը հրապարակվում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիրը կնքած անձը համարվում է

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիրը կնքած անձի էլեկտրոնային փոստին>>:

2023 թվականի դեկտեմբերի 1-ին Գնորդը պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Վաճառողին տրվել էր 10 օրացույցային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ վճարելու Գնորդի բանկային հաշվին / 900018002262/, սակայն սահմանված ժամկետում փոխանցումը չի կատարվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. << Հայկազունք >> ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00031526) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով:
2. Սույն որոշման օրինակը ուղարկել << Հայկազունք >> ՍՊԸ-ին և Հայաստանի Հանրապետությանը ֆինանսների նախարարությանը
3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ — **Վ. ԵՍԱՅԱՆ**